

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կ.Ա. Միրումյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեծ գիտնական և իմաստասեր Անանիա Շիրակացին (610/615 – 685/690) ծնվել է Շիրակի նահանգի Շիրակավան կամ Անեանք գյուղում: Ազգընական կրթությունը ստացել է Դպրուանքի դպրոցում, որը Սյունիքի, Արագածոտնի, Վաղարշապատի և մի շարք այլ դպրոցների ու վարդապետարանների հետ Յայաստանի լավագույն ուսումնակրթական հաստատություններից էր: Այստեղ ուսուցանում էին «քաջում գիտություններ»՝ թերականություն, ճարտասամություն, «համառողական արվեստ», բնագիտական տարրական գիտելիքներ, աստվածաբանական և փիլիսոփայական գիտություններ, լեզուներ: Իր իսկ վկայությամբ Դպրուանքի դպրոցում նա յուրացրել է «մեր՝ Յայոց ազգի դպրությունը» և հմտացել «աստվածաշունչ գրքերին»¹:

Թե՛ ուսանելու, թե՛ ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում Շիրակացու համար ուղենիշ ու չափորոշիչ են դառնում Սողոմոն իմաստունի հետևյալ հանճնարարականը. «Ստացիր իմաստություն և առավել պարսավիր տգիտությունը՝ իբրև խավարի ծնունդ» (Առակ Դ, 3): Եւ ապա՝ «Դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ կմերժեն» (Ըվսէ, Դ, 6): Յավանարար բազմաբռվանդակ և իմաստուն այս տողերը կողմնորոշեցին պատանի Շիրակացուն դեպի իմաստասիրություն, գիտություն:

Ուսուցման իսկ տարիներին նա հանգում է չափազանց հետաքրքիր ու կարևոր մի եղուակացության, որ առանց մարեմատիկական հիմնարար գիտելիքների՝ անհնար է խորապես յուրացնել գիտությունները և հասկապես՝ իմաստասիրությունը: «Դույս զգալով համարողության արվեստի պակասը, ես խորինցի, թե առանց թվերի [տեսության] ոչինչ հնարավոր չէ հիմնավորել՝ մայր համարեցի այն բոլոր գիտությունների (ընդգծում մերն է.-Կ.Ա.)»²: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե առհասարակ բոլոր գիտությունների, այլ բնագիտական գիտաճյուղերի մասին

¹Խոսք երից երանելի վարդապետ Անանիա Շիրակացու՝ իր կյանքի որպիտության մասին //Անանիա Շիրականոյ Պամարողի Մատենագրութիւնը / Աշխատ.՝ Ա.Գ. Արքահամյանի, Եր., 1944, էջ 206: Այսուհետ՝ Ինքնակենագրություն:

²Նույն տեղում:

է: Այլ կերպ ասած՝ Շիրակացին ընդգծում է մաքեմատիկայի կարևորությունը համապատասխ քնազիտուրյան համար, փաստորեն նշանաբերով մաքեմատիկական քնազիտուրյան գաղափարը, ինչը իր ժամանակի համար գիտական մեջ խիզախություն էր և իրականության է վերածվում միայն նոր ժամանակի գիտության մեջ: Այս հետևությունը հետազայում դառնում է նրա գիտական ստեղծագործության առանցքային սկզբունքը՝ ծեղոց բերելով մերօդաբանական հիմնարար նշանակություն:

Բայց քանի որ Դայաստանում նույնիսկ քարձր տիպի (հիմնականում՝ վաճական) դպրոցներում ուսումնական ծրագրերը չեն ընդգրկում հելլենիստական շրջանի քարձրագույն կրթության երկրորդ փուլի առարկաները («quadrivium» քառուղի կամ քառյակ գիտություններ) ողջ խորությամբ ու ծավալով, և չկային համապատասխան մասնագետներ և ուսուցիչներ, նույնիսկ մասնագիտական գրականություն մայրենի լեզվով, ուստի՝ Շիրակացին կրթական այս բացը լրացնելու և ուսումնատենչությունը քավարարելու նպատակով ստիպված մեկնում է «Դունաց աշխարհ»՝ Բյուզանդիա, իսկ ավելի կոնկրետ՝ Արևմտյան Դայաստան, որը տվյալ ժամանակաշրջանում կայսրության կազմում էր: Այդ մասին նա գրում է. «Եվ քանի որ Դայոց աշխարհում ես զգուա ոչ միայն զետ մեկ մարդ, որ խորամուխ լիներ իմաստասիրության մեջ (խոսքը տեսական փիլիսոփայության մասին է, որի մասն էր կազմում մաքեմատիկան), այլև նույնիսկ գիտությունների շարադրանքը բովանդակող գործը, ուստի մեկնեցի Դունաց երկիրը»¹: Նա լինում է Կարին-Թեսողութապոլիսում, Սինոպում, կարճ ժամանակ (6 ամիս) ստվորում է մաքեմատիկոս Քրիստոսատուրի մոտ՝ Չորրորդ Դայըրում, բայց համոզվելով, որ վերջինս նույնպես «կատարելապես չի տիրապես տում» մաքեմատիկական գիտությանը², որոշում է մեկնել կայսրության մայրաքաղաք՝ Կոնստանդինոպոլիս: Բայց ճանապարհին հանդիպելով մի խումբ հայրենակիցների՝ Շիրակացին նրանց խորհրդով ուղևորվում է Տրավիզոն՝ բյուզանդական գիտնական Տյուրքիկոսի մոտ, ով նրանց տեղեկությամբ իբր քաջածանոթ էր ոչ միայն մաքեմատիկական գիտություններին, այլև հայկական դպրությանն ու լեզվին, քանզի երիտասարդ տարիներին որոշ ժամանակ ծառայել է Դայաստանում հունական գործի կազմում: Դայըրենակիցների հաղորդմամբ նա մեծ հեղի-

¹ Նույն տեղում:

² Անանիա Շիրակացի. Խնդրակենսագրություն, էջ 26:

նակուրյուն է վայելում կայսերական արքունիքում և մայրաքաղաքի հույն գիտնականների շրջանում:

Շիրակացին մեծ հիացմունքով ու հարգանքով է խոսում իր ուսուցիչ և հատկապես նրա հարուստ գրադարանի մասին. «Ամեն տեսակի [գրքեր] կային նրա մոտ՝ [ինձ] հայտնի և անծանօթ, [եկեղեցական] և արտաքին (հեքանոսական), արվեստի մասին և պատմական, բժշկարաններ, ժամանակագրություններ»: Տյուքիկոսի դպրոցում ուր տարի սովորելու ընթացքում Շիրակացին լիովին յուրացնում է «համարողական գիտությունը», ծանոթանում նաև այլ գիտությունների և հմտանում «բազմաթիվ այնպիսի գրքերի, որոնք մեր (հայերեն) լեզվով դեռ չեն թարգմանվել»¹: Այսինքն՝ ուսումնատեսչ երիտասարդ հիմնականում ուշադրությունը քևոում է այն գրքերի (և գիտությունների) ուսումնափրության վրա, որոնք դեռևս թարգմանված չեն հայերեն ու հայտնի չեն հայրենիքում: Դավանաբար՝ խոսքը նախ բնագիտական-մարեմատիկական բնույթի աշխատությունների մասին է: Այս և մի շարք այլ կողմնակի տեղեկություններից կարելի է հետևեցնել, որ Շիրակացու ուսումնական առաջընթացի և գիտական հասունության գործում որոշիչ նշանակություն են ունեցել ոչ թե իր ուսուցիչը, այլ իր բնատուր անձնական կարողությունները և ուսման ծարավը, հայրենիքում ծեղզ բերած գիտելիքները և Տյուքիկոսի հարուստ գրադարանը, որտեղ նա փաստորեն աշխատել է ինքնուրույն²:

Այս հետևությունը միանգամայն հավանական է թվում, քանզի հայրենիքում նա ստացել է լուրջ կրորություն, ինչը կարող էր հիմք ծառայել հետագա ինքնակրորության համար: Բացի այդ, նա փաստորեն համոզվում է, որ կայսրության տարածքում չկա մի այնպիսի գիտնական-մաթեմատիկոս, ով կարող էր բավարարել իր գիտական ծարավն ու բնական հետաքրքրասիրությունը: Եվ վերջապես, Տյուքիկոսի մոտ է նա հայտնաբերում հարուստ գիտական գրադարան, ինչը հնարավորություն էր տալիս գոնե ինքնուրույն կատարելագործվել մաթեմատիկական և բնագիտական գիտությունների մեջ:

Բացի այդ, հայտնի է, որ Տյուքիկոս Բյուզանդացու՝ որպես մեծ գիտնականի և ուսուցչի մասին տեղեկությունը պահպանվել է միայն Շիրակացու մոտ: Այդ մասին լուս են թե՝ հայկական, թե՝ հունական

¹ Նույն տեղում, էջ 27:

² Տե՛ս նաև Խորլոպյան Գ.Տ., Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Եր., 1964, էջ 7:

աղբյուրները: Նրա գոյության մասին տեղյակ չէին նույնիսկ Տրապիզոնի հարակից շրջաններում: Դավանաբար՝ Նրա մեծարությունը հայ գիտնականին անհրաժեշտ էր, որպեսզի հայրենիք վերադառնալուց հետո կարողանա ապացուցել իր կրթության և ծեռքբերած գիտելիքների հիմնարար լինելը: Բանն այն է, որ անտիկ շրջանից ի վեր իմաստասրի կամ գիտնականի իմացության աստիճանը որոշելու համար հաճախ վճռորոշ նշանակություն էր տրվում նրա ուսուցչի գիտական հեղինակությանը, վաստակին, համբավին, ինչը միջնադարում ևս տարածված երևույթ էր: Դարկ է նշել, որ այս սկզբունքը գործում էր նաև հետագա դարերում, ընդհուար մեր օրերը:

Տասնմեկ տարի ճանապարհորդելուց հետո վերադառնալով հայրենից և առաջնորդվելով հայրենասիրական վեհ օգացնունքով ու նկատառումներով՝ Շիրակացին ձգտում է իր հարուստ, լայնածավալ և համակարգված գիտելիքները դարձնել ազգի սեփականությունը: Այս նպատակով նա, հավանաբար VII դարի 40-ական թվականների վերջերին (կամ 50-ական թվականներին), գիտալուսավորական ու գիտամանկավարժական լայն գործունեություն է ծավալում, բարձր տիպի դպրոց հիմնում, որտեղ ուսումնական ծրագրի ատաղջը կազմում էին հենց նաբենատիկական-բնագիտական առարկաները («քայլակ գիտություններ»):

Դեղէնիստական շրջանի կրթական համակարգը ընդգրկում էր «յոթ ազատ արվեստներ» կամ «իմաստության յոթ աստիճաններ», կամ էլ «իմաստության յոթ սյուներ»: Շիրակացին նույնպես նշում է. «Եվ իմաստության տունը հաստատում են պահում յոթ այլներ»¹: Մի այլ տեղ նա նշում է, որ գոյություն ունեն «յոթ սյուներ, որոնց հիմնան վրա իմաստությունը հաստատում է իր տունը»²: «Յոթ ազատ արվեստները» հետագայում՝ Բարձր Միջնադարում դառնում են ուսումնակրթական հաստատությունների ծրագրերի բաղկացուցիչ մասը:

Մինչև VII դարը Դայաստանի դպրոցները հիմնականում առաջնորդվում էին հումանիստար ուսուցման ծրագրերով, որոնց հիմքը կազմում էին «եռյակ գիտությունները» կամ արվեստները (τένισμα)՝ քերականություն, հօետորական արվեստ և տրամաբանություն (կամ դիա-

¹Անամիա Շիրականու Դամարողի Մատենագրութիւնը / Աշխատ.՝ Ա.Գ. Աբրահամյանի, Եր., 1944, էջ 245:

² Անամիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար / Աշխատ.՝ Ա.Գ. Աբրահամյանի, Եր., 1940, էջ 63:

լեկտիկա), այսինքն՝ հելլենիստական բարձրագույն կրթության առաջին աստիճանը: Բնագիտական-մաթեմատիկական տարրական գիտելիքները թեև նույնպես մտնում էին դպրոցական ծրագրերի մեջ, սակայն բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի գիտությունները՝ «քառյակ»-ը՝ թվաբանություն (թվերի տեսություն)¹, երաժշտություն (տեսություն), երկրաչափություն և աստղաբաշխություն, ներգրավված չեն ուսումնական ծրագրերի մեջ, և այդ կարգի կրթությունը հայ երիտասարդությունը ստանում էր արևմտյան գիտակրթական ու մշակութային կենտրոններում:

Ծիրակացու հիմնադրած բարձրագույն դպրոցն իր բնագիտական-մաթեմատիկական ուղղվածությամբ և բովանդակությամբ կոչված էր լրացնել ազգային-մշակութային ու դպրոցական կյանքում առկա այդ լուրջ բացը, ազգային կրթական համակարգը բարձրացնել հելլենիստական շրջանի մակարդակ: Նման գործի ծեռնարկումը և բարդ խնդրի իրականացումը պահանջում էին ոչ միայն ուսումնակրթական նոր ծրագրերի, դասավանդման նոր մեթոդիկայի մշակում, այլև ուսումնակրթական համապատասխան ծեռնարկների ստեղծում, ինչպես նաև աշխարհայացքային-գաղափարական և մեթոդաբանական հիմնավորումներ:

Բայց առաջին հերթին անհրաժեշտ էր մշակել ուսումնակրթական համակարգի գիտական և մեթոդաբանական հիմքերն ու հայեցակարգը: Դայտնի է, որ հելլենիստական աշխարհում և Բարձր միջնադարում բարձրագույն դպրոցի ուսումնակրթական ծրագրերի հիմքում ընկած էր գիտությունների դասակարգումը: Ուստի՝ միանգամայն բնական է, որ Ծիրակացին առաջին հերթին ծեռնարկում է գիտությունների դասակարգման մշակումը և այն ներկայացնում Անաստաս կարողիկոս Ակոռացուն (661 – 667 թթ.): Սիամանանակ իր ծրագրի իրականացումը հեշտացնելու նպատակով գիտնական-մանկավարժը ծեռնամուխ է լինում համապատասխան գիտա-ուսումնական գրականության ստեղծմանը, որը մինչ այդ բացակայում էր մեզանում: Այդ նպատակով նա ստեղծում է «Քննիկոն» համալիր աշխատությունը, որտեղ ընդ-

¹Ին Պունաստանում հստակ տարրերակում էին թվերի տեսությունը և համարողական արվեստը: Առաջինը կոչվում էր թվաբանություն, երկրորդը՝ լորդական: Առաջինը՝ դասվում էր տեսական, իսկ երկրորդը՝ գործնական՝ գիտությունների շարքին (տե՛ս Կեծկօրու Փ. История элементарной математики. Одесса, 1917, с. 29):

հանրացվում, համակարգվում և համադրական հիմքի վրա նորովի իմաստավորվում են անտիկ ու ազգային փիլիսոփայության և գիտության, ինչպես նաև հայրաբանական մտքի բազում նվաճումներ: Իր աշխատություններում նա լայնորեն օգտագործել է նաև սեփական ուսումնասիրությունների, մասնավորութեան՝ աստղագիտական դիտումների և «քնարաբանական» հետազոտությունների արդյունքները:

Շիրակացու ««Բննիկոնի»» մեջ ընդգրկված՝ աշխատությունները՝ գրված լինելով գիտությունների դասակարգման և գիտակրթական որոշակի ծրագրի հիման վրա, բնականաբար, պետք է ունենային ներքին փոխկապվածություն և ընդհանուր նպատակամիտվածություն՝ կազմնով մի ամբողջություն, երկերի համալիր, ինչը կոչված էր ապահովել բնագիտական-մաթեմատիկական կրթական համակարգի լիարժեք իրականացումը: Աշխատություններից յուրաքանչյուրը միաժամանակ ինքնուրույն արժեք ու նշանակություն ուներ, որովհետև վերաբերում էր գիտելիքի ինքնուրույն բնագավառի¹: Խևկ քանի որ ուսումնական ծրագրերը խարսխված էին (նաև Շիրակացու մոտ) գիտությունների դասակարգման վրա, ուստի՝ Շիրակացու երկերը ևս ունեին թե՝ ուսուցողական, թե՝ գիտական նշանակություն:

Շիրակացու դպրոցում «քառյակ»՝ տեսական գիտություններից բացի, դասավանդվում էին նաև տոմարագիտություն, աշխարհագրություն, չափագիտություն և այլ առարկաներ, որոնք սերտորեն անշնչում էին «քառյակի» հետ և կազմում «հարակից»՝ գործնական և կիրառական միտվածություն ունեցող գիտությունների շարքը: Շիրակացու ծրագիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան (և ոչ միայն միջնադարյան) ուսումնակրթական հայեցակարգի զարգացման, ուսումնակրթական առարկաների հաջորդականության և ուսումնակրթական համակարգի դերակատարության ըմբռնման տեսանկյունից: Այսպես, ի տարբերություն արևմտյան միջնադարում գործող կրթական համակարգի «Եռյակի» և «Քառյակի» («յոթ ազատ արվեստների») հաջորդական ուսուցման հայ գիտնական-մանկավարժի ծրագիրը նախատեսում էր նաև «քառյակ» գիտություններն ուսացանելուց հետո կրկին անդրադառնալ «Եռյակ» գիտությունների ուսումնասի-

¹Տե՛ս Մարքոսյան Ա.Ա., Անանիա Շիրակացու «Բննիկոն»-ը /Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, թիվ 7, էջ 67, Պետրոսյան Գ.Բ., Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (հոդվածներ և հրապարակումներ), Եր., 1986, էջ 52:

Ծուտով Ծիրակացու դպրոցը լայն ճանաչում ու հեղինակություն է ձեռք բերում, ուր սովորելու են զալիս Դայաստան աշխարհի ամենատարբեր կողմերից: «[Ես] ոչ ոքի չեմ արգելել, ովքեր ցանկացել են սովորել և այսուհետև էլ չեմ արգելի»², ահա մեծ հայրենասերի, գիտնական-մանկավարժի մարդասիրական-մանկավարժական գլխավոր սկզբունքը, դավանանքը, ուղենիշը, որով առաջնորդվել է ինքը և նույն կտակել զալիք սերունդների ուսուցիչներին:

Յարկ է նշել, որ քննարկվող դարաշրջանում թե' արևելքում, թե' արևմուտքում այդպիսի բարձր տիպի՝ մաքենատիկական-քնազիտական դպրոց գոյություն չուներ: Եթազոտողները իբրև այդպիսին վկայակոչում են Տյուրքիկոսի դպրոցը³, այն էլ հղելով Անանիա Շիրակացու հաղորդումը, ինչը, ինչպես կարելի էր համոզվել, իրականությանը չեր համապատասխանում:

Պատմամշակութային նախորդ շրջանում հիմնականում Հայոց պետությունն ու հատկապես Հայ Առաքելական Եկեղեցին էին կազմակերպում հայ Երիտասարդություն հելլենիստական աշխարհի լավագույն գիտական կենտրոններ (Ալեքսանդրիա, Աթենք, Եղեսիա և այլուր) ուղարկելու գործընթացը՝ ապահովելով «հեռագնա» ուսումը, իոդ տանում աշակերտների համար, դիմավորում և ազգօգուտ աշխատանքի մեջ ներգրավում նրանց: Դաճախ շնորհալի Երիտասարդությունը ամբողջական խնբեր էին ուղարկվում որոշակի մասնագիտացված կրթություն ստանալու և ազգի առջև կոնկրետ խնդիրներ լուծելու նպատակով (լեզուներ յուրացնելու, քարգմանչական աշխատանքի նախապատրաստվելու և այլն): Ծիրակացու օրոք ուսուցման նման ձեզ ի սպառ բացակայում էր: Եվ բնավ պատահական չէ, որ նա հասունում է գիտության և իմաստասիրության իմացության բարձունքներին հիմնականում անծնական ջանքերի, նպատակառողջված աշխատանքի ու բնատուր տաղանդի շնորհիվ: Այդպիսին էր նաև ուսումնատենչ այլ Երիտասարդություն ճակատագիրը, որովհետև պնտականությունը

¹ Գրիգոր Մագիստրոսի Թոքերը / Էրատ. Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, թ. 8;Տե՛ս նաև Մարքոսան Ս.Ս., Նշվ. հոդվ., թ. 71:

² Անանիա Շիրակացի. Ինքնակենսագրություն, լո 29:

³ Ст. и опубл. Самодурова З.Г. Школы и первая половина VII века. М., 1984. С. 501.

կորցված էր, իսկ եկեղեցին որպես միակ համազգային կենտրոնացված հաստատություն արդեն ի վիճակի չէր շարունակել կրթական դարավոր ավանդույթը:

Քաղաքական, տնտեսական և սոցիալական ծանր պայմաններում, բնականաբար, փոխվում է նաև մարդկանց, սոցիալական խնդերի և ողջ ժողովրդի վերաբերնունքը կրթության և գիտելիքի նկատմամբ: Դավանաբար՝ դա է Շիրակացու դժգոհությունների պատճառներից մեկը, քանի որ, ինչպես ինքն է գրում, թեև ես յուրացոյի այս «մեծագոր գիտությունը, որ բազավորներին է ցանկալի և բերեցի մեր երկիրը՝ առանց որևէ մեկի աջակցության, շնորհիկ միայն իմ անձնական ջանքերի... թեպետ և ոչ ոք չգտնվեց մեծարոր և շնորհակալ իմ աշխատանքի համար»: Խոսքը, իհարկե, փառասիրության մասին չէ, այլ ազգի մեջ սերմացած ու ամենուրեք տիրող անտարբերության մքնոլորտի: Եվ միայն հուգական պողոքումով կարելի է բացատրել, որ նմանօրինակ վերաբերնունքը նա փորձում է բացատրել այն բանով, որ մեր ժողովուրդը իբր «իհաստասիրության և գիտության սիրող չէ, այլ ծովյ է և ծանծրացող»¹: Խոսքը, ինչպես կարելի է նկատել, հոգևոր-մշակութային արժեհամակարգում գիտելիքի նկատմամբ վերաբերնունքի արնատական փոփոխության մասին է:

Այդ կապակցությամբ Շիրակացին անդրադառնում է նաև ուսուցման համակարգում առկա որոշ միտուների, հատկապես՝ բարձրագույն կրթության բնագավառի նկատմամբ գոյություն ունեցող վերաբերնունքին՝ տալով ուսանողների բարոյական և մասնագիտական կեցվածքի կենողանի և հուգիչ նկարագիրը. «Եթե ես վերադարձա, շատերը եկան ինձ մոտ սովորելու, և փոքր-ինչ խելամտած՝ թողեցին ինձ և հեռացան, չմնացին մինչև գիտության [յուրացման] ավարտը, առօրյա կարիքների համար բավական համարելով այն, ինչ ստացել են: Եվ ինձնից շատ շուտ առանձնանալով, սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չզիտեին, և իրենց ներկայացնել իրեն ուսուցիչներ, որոնց հասու չին: Կեղծավորներ և սնափառներ՝ նրանք ուզում են գիտնականի կեցվածք ընդունել և մարդկանց կողմից ուսուցչապետներ կոչվել»²:

¹Նույն տեղում, էջ 28:

²Նույն տեղում:



Այս տիտուրը դատողություններում դրսևորվում է մեծ գիտնականի ու մանկավարժի հիրավի արդարացված զայրույքին այն անձանց նկատմամբ, որոնք չեն հասկանում տեսական գիտելիքների, հանակարգված ու հիմնարար կրթության անհրաժեշտությունը և սահմանափակվում են լոկ գործնական բնույթի և նակերեսային գիտելիքների ձեռքբերմանը: Այնուհանդերձ, դա որևէ հիմք չի տալիս նշված դատողությունները գնահատել որպես սոցիալական դժգոհության արտահայտություն կամ «խիստ հալածանքի» ենթարկվելու հետևանքը, ինչպես հաճախ վարդում են հետազոտողները¹: Որովհետև այդ նշումները նաև խորքային օբյեկտիվ հիմքեր ունեն և բնորոշ են բոլոր ժողովուրդներին ու երկրներին, երբ քաղաքական խորքային տեղաշարժերի հետևանքով փոխվում են նաև արժեհամակարգը:

Բանն այն է, որ կրթական հանակարգը հասարակության (մեր դեպքում՝ ազգային հանրույքի) կառուցվածքային միավորներից է՝ սերտորեն փոխկապակցված ազգային կյանքի մյուս ոլորտների հետ: Ուստի՝ ազգային կեցության անբարենպաստ պայմաններում փոխվում է նաև վերաբերմունքը կրթության նկատմամբ: Այդպես էր VII դարում Հայաստանում ու պատմանշակութային այլ դարաշրջաններում, այդպես էր իրավիճակը բոլոր մյուս երկրներում, այդ բվում՝ ներկայում:

Որպես գիտնական՝ Շիրակացին գործուն դերակատարություն է ունեցել նաև ազգային-եկեղեցական կյանքում: VII դարում Հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը շարունակում էին առաջնորդվել շարժական տոմարով, ինչը բազում դժվարություններ ու շփորություններ էր ստեղծում եկեղեցական տոմների համակարգում: Նման խոչընդուները հաղթահարելու ու վերացնելու համար անհրաժեշտ էր գոյություն ունեցող հայկական շարժական տոմարը փոխարինել անշարժ տոմարով, որպեսզի «չտեղաշարժվեն տարվա տոնները և ժամանակի հարափոխի եղանակները»: Խնդրի կարևորությունը խորապես գիտակցելով՝ Անաստաս կաթողիկոս (հավանաբար ծանօթանալով Շիրակացու կազմած գիտությունների դասակարգման հետ և համոզվելով նրա խորինացության մեջ) այդ բարդ ու դժվարին գործը հանձնարարում է նրան, ինչն ակներևար վկայում է գիտնականի մեծ հեղինականության և համբավի մասին:

¹ Խորլոպյան Գ.Տ., Անանիա Շիրակացու աշխարհայացքը, էջ 17:

Ծիրակացին հաջողությամբ կատարում է պատվավոր հանձնարարությունը՝ տոմարական հաշվումները կապելով աստղաբաշխության ու մաքնատիկայի հետ, «հորինում է հայկական տոմարի հաստատում կարգը», որպեսզի «հարկ չլինի այլևս դիմելու հռոմեական գուգավորությանը»¹: Նա միաժամանակ հաճախատասխանեցնում է 15 ժողովուրդների տոմարները՝ 532-ամյա շրջանի համար՝ կազմելով գուգահեռ հովիական և հայկական տոմարներ: Գիտնականը կատարել է մի կարևոր աշխատանք և՝ վերհանելով և շրջանառության մեջ դնելով ամիսների, օրաժամերի և չափերի հին հայկական անվանումները: Իր տոմարագիտական աշխատություններով նա հիմնադրեց տոմարագիտությունը որպես ինքնուրույն գիտաճուղ: Անվանի հայագետ Գ. Տեր-Սկրտչյանը Ծիրակացու դերը տոմարագիտության ոլորտում համեմատում է Սովորելու պատմագրության ոլորտում ունեցած դերի հետ²:

Սակայն արաբների հերթական ներխուժումը Հայաստան և Անաստաս կարողիկոսի մահը բույլ չտվեցին տոմարական բարեփոխումների նախագիծը հաստատել հայոց եպիսկոպոսական ժողովում և դրան հաղորդել պաշտոնական համագգային բնույթ: Շուտով Ծիրակացու կազմած «անշարժ» տոմարի նախագիծը տարբեր (սուբյեկտիվ և օբյեկտիվ) պատճառներով մոռացության է մատնվում, ինչի հետևանքով Եկեղեցին ու ազգը շարունակուն են դեկավարվել հին շարժական տոմարով: Այս խնդիրը հետագայում պատճամշակութային նոր դարաշրջանում ստիպված կրկին լուծում է Յովիաննես Սարկավագ Իմաստասերը (1045–1129 թթ.): Այնուհանդերձ՝ նշված փաստերը միանշանակ վկայում են, որ Ծիրակացու գիտական գործունեությունը ոչ թե միայն պարսավանքի է ենթարկվել Եկեղեցական որոշ գործիչների կողմից, այլև հավանության ու աջակցության է արժանացել Կայ Եկեղեցու լուսավորյալ ու հայրենացեր, դրա հրական պատճական խնդիրներն ու առաջելությունը գիտակցող հոգևորականության շրջանում³:

Անանիա Ծիրակացու գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ է գրավում հոչակավոր տոմարագետ Անդրիաս Բյուզանդացու (IV դ.) տոմարի մեկնությունը, որը բազմարիվ տեղեկություններ է պարունա-

¹ Յովիաննես Դրասպամակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92:

² Տեր-Սկրտչյան Գ., Անանիա Ծիրակացի, վաղարշապատ, էջ 36:

³ Պնմն՝ Խորլուպյան Գ.Տ., Անանիա Ծիրակացու աշխարհայացքը, էջ 23 – 24, Թումանյան Բ.Ե., Անանիա Ծիրակացի, Եր., 1991, էջ 7:

կում նաև հայկական օրացույցի մասին: Դայ գիտնականի աշխատության արժեքը ավելի է մեծանում, եթե նկատի ունենանք այն հանգանքը, որ Անդրիաս Բյուզանդացու երկի բնագիրը չի պահպանվել¹:

Ծիրակացու նկատմամբ Դայ Եկեղեցու մերժողական վերաբերմունքը հիմնավորելու նպատակով հետազոտողները սովորաբար հղում են Պետրոս Գետադարձ կարողիկոսին ուղղված՝ ականավոր ռազմաքաղաքական գործից ու գիտնական-իմաստատեր Գրիգոր Մագիստրոսի (XII դ.) նամակը, որտեղ հեղինակը նշելով Ծիրակացու երկերը կաթողիկոսարանի գրապահոցում «արգելանքի տակ պահելու» մասին՝ հորդորում է հոգևոր առաջնորդին լուս աշխարհ հանել ու շրջանառության մեջ դնել մեծ գիտնականի՝ մոռացության մատնված երկերը²: Գրիգոր Մագիստրոսի հաղորդման մեջ, սակայն, խոսքը ո՞չ - թե Եկեղեցու կամ հոգևորականների կողմից Ծիրակացու գրավոր ժառանգության «արգելման» կամ «արգելանքի տակ պահելու», որա նկատմամբ դրսևորված անհանդուրժողության քաղաքականության, այլ գիտական և ուսումնակրթական ոլորտների մեջ դրանց ընդգրկելու ու տարածելու անհրաժեշտության մասին է: Այսինքն՝ Ծիրակացու երկերի տիսուր ճակատագիրը և անմիտիրար վիճակը պայմանավորված էն ո՞չ թե Դայ Եկեղեցու վարած հակագիտական քաղաքականությամբ, գիտական մտցի մերժումով և դրա կրողների հալածանքով, այլ առաջին հերթին և գլխավորապես ազգային կյանքի անբարենպաստ պայմաններով, պատմական անցուդարձերով, արաբական լծի խստացումով, դրանց հետևանքով նշակութային կյանքի անկումով և օրեկտիվ այլ պատճառներով:

Ավելին, քննարկվող ժամանակաշրջանում նույնպիսի ճակատագրի էր արժանացել նաև պատմամշակութային նախորդ դարաշրջանի քաղում այլ մտածողների գիտափիլիսոփիայական և մշակութային ժառանգությունը: Ուստի՝ Գրիգոր Մագիստրոսի կոչը և հորդորանքը ավելի ճիշտ կլինի դիտել պատմամշակութային ու քաղաքական առավել լայն համատեքստում, որպես սեփական ազգային հոգևոր և գիտական արժեքների «վերածնության» ու տարածնան, դրանք պատմական նոր դարաշրջանում ծնավորվող արժեքանական, մասնավորապես՝ գիտական ու ուսումնակրթական համակարգի մեջ մերժութելու և

¹ Թումանյան Բ.Ե., Դայ աստղագիտության պատմությունից, էջ 170:

² Գրիգոր Մագիստրոսի Թոքերը, էջ 8:

ազգային մտքի ոլորտում ժառանգորդման սկզբունքի ապահովման վեհ մտադրություն:

Ծիրակացի-գիտնականը միաժամանակ ազգային-քաղաքական, գաղափարական և հոգևոր արժեքների ու ծգտումների կրող էր, մեծ հայրենասեր, ով ծգտում էր ազգի, հատկապես մատադ սերնդի, ոչ միայն գիտատեսական մտածողության և ուսումնակրթական մակարդակի բարձրացմանը, այլև ազգային-գաղափարական, հայրենասիրական ոգով դաստիարակմանը: Այդ նպատակով նա իր նախորդների նման դիմում է ազգի փառավոր պատմական անցյալին, ազգային կյանքի զանազան ոլորտներին ու իրադարձություններին: Այս առումով հետաքրքրական են նրա քվաբանական որոշ խնդիրները, որտեղ միջնորդավորված ձևով հիմնավորվում է հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը և հաղթանակի հասնելու հնարավորությունը, ինչը արաբական տիրապետության պայմաններում ծեռօր էր բերում նաև գաղափարաքաղաքական հնչեղություն:

VII դարում Դայ Եկեղեցու և հայ ժողովորի համար հրատապ ու գործնական մեծ նշանակություն ուներ նաև քաղկեդոնականության (Երկարնակության) և հակացաղկեդոնականության առնակատումը: Քաղկեդոնականությունը, ինչպես հայտնի է, Բյուզանդական կայսության ոչ միայն կրոնակեղեցական դավանանքն էր, այլև պաշտոնական՝ պետական գաղափարախոսությունը, դրա աշխարհակալ քաղաքականության կրոնագաղափարական հիմքը և հզոր գենքը քրիստոնյա մյուս ժողովուրդներին ենթարկելու գործում: Կայսրությունն ու հունական Եկեղեցին շուրջ երկու դար ջանք չեին խնայում իրենց ենթարկել նաև Դայ Առաքելական Եկեղեցին՝ քրիստոնեական քույր Եկեղեցիների միավորման քողի տակ:

Սակայն քաջատեղյակ լինելով «Երկարնակության» բանաձեկի ընդունման իրական պատմությանը և քաղաքական նկրտումներին՝ Ծիրակացին փաստագրական հիմքի վրա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այն «ընդունվել է» Քաղկեդոնի ժողովում (451թ.) ո՛չ թե ճշմարիտ լինելու պատճառով, ո՛չ թե քրիստոնեական Եկեղեցիների հայրերի և հոգևոր առաջնորդների կամքի, համոզնումքների ազատ ու անկաշկանդ արտահայտմանը կամ տեսակետների առողջ և հիմնարար քննարկումների ու վիճաբանության հետևանքով, այլ որովհետև այն բխում էր կայսերական շահերից, ավելին՝ Բյուզանդիայի կայսեր կողմից բռնության կիրառման արդյունք էր: Ուստի «Քաղկեդոնի ժողովա-

կանոները՝ ոմանք երկյուղից, իսկ մյուսները, երեսպաշտություն անելով կայսրին և նրա կնոջը՝ հավանություն տվին Առնի նոր բանաձևի պիդ թթին»¹: Քաղկեդոնի ժողովի ողջ ընթացքը և ընդունած որոշումը հայ մտածողն իրավամբ բնորոշում է որպես ընդգծված քաղաքական բռնի գործողություն և բնավ ոչ իրու քրիստոնեական վարդապետության ճշմարիտ հենքի բացահայտում, քրիստոնարանական հիմնախնդրի ճիշտ մեկնարանում:

Դամենատելով հայոց ու հունաց եկեղեցիների դավանարանական, քրիստոնարանական դիրքորոշումները և արձանագրելով պատմական այն իրողությունը, որ հայերը Նիկիայի ժողովում (325 թ.) հավաքված ընդհանրական եկեղեցու սուրբ հայութի՝ իրենց իսկ հույների անմիջական ու հավատարիմ հետևորդներն են, Անանիա Շիրակացին, դիմելով իր ժամանակի հունական եկեղեցու առաջնորդներին, իր «Դայտնության ճառում» հպարտությամբ հայտարարում է. մենք՝ հայերս «ծեր սուրբ հայութի աշակերտներն ենք, որոնք հավաքվել են Նիկիայում, և ինչ որ սովորել ենք, հաստատուն ենք պահում ու չենք շեղվում, իսկ որ դուք ծեր [իովանոր] հայութի ճանապարհով չեք գնում, քվում է, թե առաջնորդվում եք հրեաների կրօնով։ Ինչպես որ նրանք սամարացիներին սովորեցրին ու սամարացիները սովորեցին ու պահեցին, [իսկ հրեաները, որ սովորեցրին, քայլ նրա վրա հաստատուն չմնացին]: Եվ դուք ահա նրանց եք նմանվում, իսկ այդ մեզ ամենեկին էլ չի վնասում։ Քայլ մենք ավելի հաստատուն ենք, քան սամարացիները, առավել քարձրագույն և աստվածային»։ Դայերը բնավ չեղվեցին նրանց նախանշած ճշմարիտ ուղուց։ Մինչդեռ հույները, հետապնդելով քոնատիրական նպատակներ, իրենց իսկ սուրբ հայութի նշանած ճանապարհով չեն ընթանում, շեղվել են հավատքի ճշմարիտ ուղուց և դավաճանել ճշմարիտ դավանանքին։ Ուստի, «մենք, - շարունակում ենա՝ դիմելով հույներին, - ծեզ պատասխանելու խոսք չունենք, քանի որ դուք չեք հետևում ճշմարտությանը, այլ միշտ ծգուում եք իշխանության, քոնության և ծարտարության (ընդգծումն մերն է - Կ. Ս.)»².

Մեծ հայրենասերի և ազգային արժեքների նվիրյալի սկզբունքային դիրքորոշման մասին է վկայում նաև այն փաստը, որ երբ նրա մի շարք

¹Անանիա Շիրականու Դամարողի Սատենագրությունը, էջ 392:

²Մաթեմատիկոս Անանիա Շիրակացու [աշխատությունը] մեր Տիրոջն Փրկչի Դայտնության առիթվ // Անանիա Շիրակացի. Սատենագրություն, էջ 158: Այսուհետ՝ Դայտնության ճառ:

ուսանողներ մեկնելով Երուսաղեմ՝ այնտեղ ընդունում են քաղկեդոնականություն, Շիրակացին հրաժարվում է նրանցից¹:

Դայոց եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշումը հայ ժողովրդի ազգային, հոգևոր-մշակութային և գաղափարաքաղաքական անկախության համար մղվող և ավանդական դարձած պայքարի վառ արտահայտություններից էր, իսկ այդ հայեցակարգի պատմական, հոգևոր-քարոյական և տեսական-աշխարհայացքային հիմնավորումը միաժամանակ ազգային գաղափարախոսության հիմնավորումն էր: Բացի այդ, Շիրակացու վերոհիշյալ դատողությունները սկզբունքային նշանակություն ունեն նրա բնագիտական աշխարհայացքի և գիտամանկավարժական գործունեության համար առհասարակ, ինչը ստանում է նաև տեսական-մեթոդաբանական և պատմամշակութային հիմնավորում: Այդուհանդերձ, հայ պատմագրության մեջ փորձ է արվել Անանիա Շիրակացուն (ինչպես և մի շարք այլ ականավոր գիտնական-իմաստասերների) ներկայացնել որպես քաղկեդոնական դավանանքի հետևորդ², ինչը հակասում է թե՛ պահպանված փաստերին, թե՛ նրա աշխարհայացքի ու քաղաքական դիրքորոշման ողջ բովանդակությամբ-ու տրամաբանությամբ:

* * *

Շիրակացու «քնաբանությունը» (գիտություն բնության մասին՝ ֆիզիկա) ո՞չ թե «իդեաների ֆիլիացիայի» կամ «իդեաների դիֆուզիայի», այլ գիտափիլիսոփայական մտքի զարգացման նախորդ փուլերի իմաստավորման ու սեփական բնագիտական դիտումների և հետազոտությունների արդյունք է: Այն տեսական և գործնական բնույթի մի շարք նախադրյալներ ուներ:

Առաջին նախորդ շրջանի հայ տեսական մտքի համադրական աշխատանքի նվաճումները (Եզնիկ Կողբացի, Եղիշե, Ղավիթ Անհառը և այլոք):

Երկրորդ թարգմանական, հատկապես հայ հունաբան դպրոցի գործունեությունը, որի շնորհիկ հայերենի վերածվեցին անտիկ և վաղ-

¹ Սամուել Անեցի, Հավաքումն

² Տե՛ս օրինակ՝ Շամչեանց Մ., Պատմութիւն Դայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 552 – 555:

թիստոնեական մտքի բազում հուշարձաններ¹, որոնք շրջապատող Ֆիզիկական աշխարհի և բնական երևույթների մասին ստվարածավալ ու բազմաբնույթ նյութեր և գաղափարներ էին պարունակում: Թարգմանական գրականությունը եռակի դերակատարություն ունեցավ. ա) հայ նշակութային իրականության մեջ ներմուծվեցին տիեզերքի և բնության մասին բնափիլիսոփայական և բնագիտական բազմարիվ գաղափարներ ու ամբողջական հայեցակարգեր, բ) որպես մտածական նյութ ծառայեց հայ բնագիտական և բնափիլիսոփայական մտքի ձևավորման ու զարգացման համար, գ) թարգմանված հուշարձանները միաժամանակ ներմուծվեցին ուսումնակրթական հանակարգ՝ որպես ուսումնական ճենարկներ, ինչը նպաստեց դրանց տարածման շրջանակների ընդլայնմանը:

Երրորդ՝ Դավիթ Անհաղթի գիտությունների դասակարգումը, որտեղ հանճարեն հայ ինստատասերը մի կողմից ընդհանրացրեց անտիկ շրջանի փիլիսոփայական հիմնական տեսությունները, մյուս կողմից՝ հիմնադրեց միջնադարյան փիլիսոփայության անկյունաթարերը, ձևակերպեց միջնադարի առանցքային ու հիմնարար մի շարք խնդիրներ: Անհաղթի գիտությունների դասակարգման համաձայն բնագիտությունը (կամ Ֆիզիկան) կազմում է տեսական փիլիսոփայության առաջին մասը, որի ուսումնասիրությունն ու յուրացումը անհրաժեշտ են մաթեմատիկական գիտությունների, ապա աստվածաբանության ուսումնասիրությանն անցնելու համար:

Չորրորդ՝ VII դարում տեղի է ունենում տարանցիկ առևտորի նկատելի աշխատացում, արտադրության, արիեսատների, գյուղատնտեսության որոշակի զարգացում, շինարարական, հատկապես՝ Եկեղեցաշնական աշխատանքների ժավակում և այլն, ինչը, բնականաբար, նաև բնագիտական-մաթեմատիկական-տեխնիկական խոր գիտելիքներ էր պահանջում:

Ծիրակացու տեսական ժառանգությունն ընդգրկում է հելլենիստական շրջանի բնագիտական-մաթեմատիկական գիտելիքի գործերը բոլոր բնագավառները՝ տիեզերագիտություն, թվարանություն (տեսական և գործնական), աստղաբաշխություն, տոմարագիտություն, երաժշտության տեսություն, չափագիտություն, աշխարհագրություն, օ-

¹Տե՛ս *Аревшатагиւ С.С. Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*. Еր., 1973.

դերևութաբանություն և այլն: Այն ոչ միայն հայ, այլև հաճաշխարհային բնագիտության պատճնության արժեքավոր էջերից է:

Շիրակացու հիմնական երկասիրությունը «Տիեզերագիտություն» է, որը պահպանվել է համառոտ և ընդարձակ խմբագրությամբ: Աշխատանքի բովանդակության ու կառուցվածքի հետազոտությունը հիմք է տալիս պնդել, որ այն ամենայն հավանականությամբ՝ նախատեսված էր որպես ընդիհանուր (տեսական) բնագիտության հաճակարգված շարադրանք և միաժամանակ որպես բնագիտության ճյուղերի (տիեզերածնության, տիեզերագիտության, աստղաբաշխության, աշխարհագրության) ընդհանրական ներածական ու յուրահատուկ դասագիրք: Այն գրված է հիմնականում անտիկ գիտության նվաճումների հիման վրա՝ հաշվի առնելով նաև դարաշրջանի տիրող քրիստոնեական աշխարհայացքը: «Տիեզերագիտության» հիմնական աղբյուրներն են. *Պտղոմեոսի Երկերը*, *Կեղծ-Արիստոտելի «Աշխարհի մասին»* աշխատությունը, *Փիլոն Ալեքսանդրացու Երկերը*, *Բարսեղ Մեծի «Կեցօրյան»*, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը»* և այլն: Անանիա Շիրակացին հետազոտական ճյուրի մշակման ու շարադրման, ինչպես նաև հիմնախնդիրների լուսաբանման ու վերլուծության ընթացքում լայնորեն՝ կիրառել է Արիստոտելի և *Պլատոնի* հայեցակարգային սկզբունքներն ու հիմնադրույթները: Այստեղ է Շիրակացին ծևակերպում իր տեսական-աշխարհայացքային հիմնարար սկզբունքներն ու գաղափարները, ներկայացնում անտիկ և քրիստոնեական տիեզերագրության առանցքային խնդիրները, մշակում բնագիտական իմացության ընդհանուր մերուդներն ու եղանակները, որոնց կոնկրետացվում են բնության մասին գիտության առանձին բնագավառներին ու հարցեղին նվիրված աշխատություններում:

«Տիեզերագիտությունը» բաղկացած է ներածական խոսքից և ինը գլուխներից: Դեղինակը նյուրը շարուադում է որոշակի տրամաբանությամբ և հստակ կառուցվածքով: Նախ նա բացահայտում է տիեզերքի բաղկացուցիչ տարրերը, դրանց համակցություններից առաջացած նարմիններն ու երևույթները և հետո միայն՝ տիեզերքի կառուցվածքը, կառուցվածքային միավորների բնույթը, ծևը և չափը:

Բովանդակային առումով սույն Երկին մոտ են տիեզերագիտական բնույթի մի շարք փոքրածավալ գրվածքներ. «Կենդանատեսակների մասին», «Աստղաբաշխության մասին», «Աստղաբաշխական Երկրաչափություն», «Երկնային Երևույթների մասին», «Արեգակի ընթացքը

համաստեղություններով», «Ամպերի և նշանների մասին» և այլն, որոնք վերաբերում են տիեզերագիտության ու բնագիտության համեմատաբար մասնավոր բնագավառներին և մասամբ լրացնում, նշգրտում, իսկ երբեմն ավելի հստակ են ներկայացնում «Տիեզերագիտության» մեջ արծարժված որոշ հիմնարար գաղափարներ:

Դայագիտության մեջ հիշատակված որոշ տեքստերի հեղինակային պատկանելությունը համարվում էր Երկրայիլի: Այսպես, «Աստղաբաշխական Երկուաչափություն» գրվածքի կապակցությամբ պրոֆեսոր Բ.-Շ. Թումանյանը այն կարծիքն է հայտնել, որ դրանում առկա տվյալները «ծաղկաքաղ են հույն հեղինակների աշխատություններից և դրանց ստացման եղանակները ու չափումները Անանիա Շիրակացուն վերագրելը ճիշտ չէ»¹: Այնուհանդեռձ, Ժխտելով աշխատության գիտական ինքնուրույնությունը՝ Բ.-Շ. Թումանյանը չի Ժխտում դրա պատկանելությունը Շիրակացուն: Նման կարծիք է արտահայտվել նաև «Ամպերի և նշանների մասին» և «Աստղաբախչության մասին» գրվածքների վերաբերյալ: Որոշ հետազոտողներ ավելի հավանական են համարում, որ դրանք թարգմանություններ են հունական աղբյուրներից²: Եվ վերջապես՝ դրանք դիտվում են որպես մեզ չիասած ընդարձակ տեքստերի հատվածներ³:

Մեր կարծիքով՝ հետազոտողների նկատառումների միջև սկզբունքային տարբերություն չկա, դրանք չեն հակադրվում միմյանց, թեև մատնանշում են գրվածքների ստեղծման տարրեր եղանակները՝ ծաղկաքաղ լինելը, հունական աղբյուրների հատվածաբար թարգմանությունը, չպահպանված ինքնուրույն Երկերի հատվածները: Նշված երեք տեսակետն է, մեր կարծիքով, գոյության լիարժեք իրավունք ունեն: Սիամանանակ՝ հարկ է նկատել, որ կարևոր այն է, որ հետազոտողներից ոչ ոք չի մերժում, որ այդ աշխատանքը, անկախ գրվածքների բնույթից, կատարել է Շիրակացին:

Ավելին՝ փոքրածավալ աշխատությունների և «Տիեզերագիտության» համապատասխան բաժինների համեմատական վերլուծությունը

¹ Թումանյան Բ.-Շ., Դայագիտության պատմությունից, Եր., 1985, էջ 138:

² Տես՝ Տեր-Ակրոլյան Գ., Անանիա Շիրակացի // Դայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Եր., 1979, էջ 241, Տեր-Ճավոյան Կ. և Արքունիան Ս. Անանիա Շիրակացի և այլ աշխատանքների համեմատական վերլուծությունների մասին համապատասխան բաժինների համեմատական վերլուծությունը // Ականիա Շիրակացի. Կոսմոգրաֆիա. Եր., 1962, ս. 26:

³ Աբրամյան Ա. Գ., Պետրոսյան Գ. Բ. Անանիա Շիրակացի. Եր., 1970, ս. 68.

իիմք է տալիս ենթադրելու, որ դրանք հավանաբար նախատեսված երկերի նախապատրաստական նյութեր են, ելակետային գաղափարներ, տեսական իիմնադրույթներ, որոնք մասամբ օգտագործվել են «Տիեզերագիտության» և այլ աշխատությունների մեջ: Դրանով կարելի է բացատրել թե՛ ննանությունները, թե՛ տարեցրությունները, որոնք առկա են «Տիեզերագիտության» և վերոնշյալ աշխատությունների բովանդակության միջև: Չի բացառվում նաև, որ վերջիններս Տյուրիկոսի գրադարանում կատարած բնագիտական-մաթեմատիկական բնույթի հունական աղբյուրների համառոտագրություններն են: Ակնհայտ է մի բան. դրանք բոլորն ել պատկանում են Շիրակացու գրչին և արծածված գաղափարներն ու իիմնադրույթները միանգամայն հարազատ են և ընդունելի գիտնականի համար:

Մասնագետների կարծիքով՝ Շիրակացու «Աշխարհացույցը» պատկանում է համաշխարհային աշխարհագրական և քարտեզագրական գրականության արժեքավոր հուշարձանների շարքին: Նետազոտությունները ցույց են տալիս, որ այն գրվել է հունական, հռոմեական և հայկական քարտեզների և աշխարհագրական երկերի ուսումնասիրության իիման վրա: «Աշխարհացույցը» բովանդակում է Հայկական լեռնաշխարհի Ֆիզիկական-աշխարհագրական առաջին գիտական շրջանացումը, բազմաթիվ տեղեկություններ Վրաստանի, Աղվանքի, սլավոնական ցեղերի, չին ժողովրդի մասին: Ինչպես և մյուս աշխատություններում, Շիրակացին, բացի գիտական աղբյուրներից, օգտագործել է նաև սեփական դիտումների և ճանապարհորդության արդյունքները:

«Աշխարհացույց»-ը նույնպես պահպանվել է համառոտ և ընդարձակ խմբագրությամբ: XVII դարից այն վերագրվել է պատմահայր Սովուս Խորենացուն (V դ.): XIX դարում պրոֆեսոր Բ. Պատկանյանը լուրջ փաստարկների իիման վրա այն վերագրեց Անանիա Շիրակացուն¹: Նետազայում ակադեմիկոս Յ. Սանանյանը վերածնեց իին՝ Սովուս Խորենացուն պատկանելության վարկածը: Նրա իիմնական փաստարկներից մեկն այն է, թե իբր «Աշխարհացույցի» հեղինակի հայացքները չեն համապատասխանում Շիրակացու աշխարհայացքին²: Նետելով Յ. Սանանյանին՝ Ն. Պիգուլևսկայան նույնպես

¹Армянская География VII века по Р.Х., приписываемая Монсею Хоренскому / Пер. К.П. Патканова. СПб., 1877. С. XIII, XVIII.

²Սանանյան Յ. Խորենացու առեղծվածի լուծումը. Եր., 1934, էջ 65:

տեղ ուսումնասիրության կենտրոնում է Երկիրը՝ որպես տիեզերակառուցի հիմնական միավորներից մեկը:

Շիրակացու թվաբանության դասագիրքը, մասնավորապես՝ թվաբանական գործողությունների աղյուսակները, հնագույնն են համաշխարհային մարենատիկական գրականության մեջ: Սինչև հայ գիտնականի դասագրքի հայտնաբերելը գիտության պատմության մեջ ընդունված էր այն տեսակետը, թե հնագույն թվաբանական աղյուսակների հեղինակը XIV դարի բյուզանդական մարենատիկոս հայազգի Նիկողայոս Արտավազդն է: Սակայն պրոֆեսոր Գ.Բ. Պետրոսյանի կողմից կատարած համենատական ուսումնասիրությունը հանգեցրեց այն եզրակացության, որ Նիկողայոս Արտավազդի աղյուսակները լիովին հանընկնում են Շիրակացու աղյուսակների հետ: Պարզապես հայկական տառերի փոխարեն նա օգտագործել է հունական տառեր¹: «Մաթեմատիկական մշակույքի հնության առումով,—գրում է Ղեպանը,—Սովետական Միության ժողովուրդների մեջ առաջին տեղում են հայերը: Յայերի մոտ VII դարում եղել է հրաշալի գիտնական Անանիա Շիրակացին... Իր աշխատություններում, բացի գուտ մարենատիկական խնդիրներից, արծարծում է նաև այլ հարցեր՝ երկի գնդաձնության, Լուսի և Արեգակի խավարումների, բազմանկյուն թվերի, օրացուցային հաշվումների, արեգակնային ժամացույցների մասին, և այդ ամենը նա արտահայտել է մի դարաշրջանում, երբ Եվրոպական ժողովուրդների մոտ գրեթե ոչ ոք այդ հարցերի ուսումնասիրությամբ չէր զբաղվել»²: Թվաբանության պատմության հայտնի մասնագետը միանշանակ պնդում է, որ Անանիա Շիրակացու թվաբանական չորս գործողությունների աղյուսակները հնագույն են համաշխարհային մարենատիկական գրականության պատմության մեջ:

Նմանօրինակ բարձր գնահատական են տալիս նաև մարենատիկայի պատմությանը նվիրված հիմնարար կոլեկտիվ աշխատության հեղինակները. «Ընդհանուր առմանը Շիրակացու թվաբանական աշխատությունը մեզ հայտնի թվաբանական դասագրքերից հնագույնն է և բովանդակում է թվաբանական գործողություններ կատարելու համար

¹ Տես Պետրոսյան Գ.Բ., Մաթեմատիկան Յայաստանում հին և միջին դարերում, Եր., 1959, էջ 176:

² Հեղման Ա.Ա. Իстория арифметики. М., 1959. С.18.

պնդում է, որ ի տարբերություն «Աշխարհացույցի» հեղինակի, ով պաշտպանում է Երկրի գնդածնության հայեցակարգը, Շիրակացին, ինչպես և բյուզանդական գիտնական, Եկեղեցական տեղագրության պաշտոնական տեսաբան Կոսմա Ինդիկոպիլովը, իր «Տիեզերագիտության» մեջ իբր պաշտպանում է Երկրի տափակության գաղափարը¹: Պրոֆեսոր Ա.Գ. Աքրահամյանը քննադատորեն վերլուծելով Հ. Մանոնյանի փաստարկները, հիմնավորեց Զ. Պատկանյանի առաջադրած տեսակետը²:

Դրանից հետո հայագիտության մեջ համեմատական անդորր էր տիրում, և գիտնականների հաճար կարծես «Աշխարհացույցի» հեղինակային պատկանելության հարցն այլևս տարակուսանք չեր առաջացնում: Այնուհանդեռձ, Վերջերս Յ. Մանոնյանի վարկածը նորից դրվեց շրջանառության մեջ³: Թեև հարցի լուծումը չի կարելի վերջնականապես ավարտված համարել, այնուամենայնիվ, ավելի հիմնավորված ու համոզիչ է թվուն այն տեսակետը, որի համաձայն՝ Եշված Երկը նույնպես պատկանում է Շիրակացուն: Դրա օգտին է խոսուն նաև ներ ուսումնասիրությունը⁴, որտեղ սկզբնաղբյուրների մանրազնին հետազոտության և փաստարկման տարրեր եղանակներով ցույց է տրվում, որ «Տիեզերագիտության» հեղինակը ոչ միայն որևէ առնչություն չունի Երկրի տափակության հայեցակարգին, այլև վերջին հանգամանքը լիովին հակասում է «Տիեզերագիտության» շարադրման տրամաբանությանը և կառուցվածքին: Բացի այդ, մեր նկատառումը միանգամայն հաճակունչ է հենց Շիրակացու ծևակերպած մեթոդաբանական այն սկզբունքին, որի համաձայն՝ գիտական հետազոտությունը պետք է սկսել ընդհանուրից և աստիճանաբար անցնել մասնավորից: Բովանդակային վերլուծությունը ևս հիմնավորում է, որ հայ գիտնականն այս Երկուն նույնպես պաշտպանում է Երկրի գնդածնության գաղափարը:

«Աշխարհացույցը» բաղկացած է Երկու հիմնական մասից՝ տեսական և նկարագրական: Ի տարբերություն «Տիեզերագիտության»՝ այս-

¹ Письменская Н.В. Византия на путях в Индию. М.-Л., 1951.

² Աքրահամյան Ա.Գ., Խորենացուն վերագրվող «Աշխարհացույց»-ի հեղինանակի հարցի շորոջը, Եր., 1940:

³ Դարրերյունյան Բ.Դ., «Աշխարհացույց»-ը և չորս Յայքերի խնդիրը, Եր., 1997:

⁴ Սիրումյան Կ.Ա., Անանիա Շիրակացի, Եր., 1998:

տեղ ուսումնասիրության կենտրոնում է Երկիրը՝ որպես տիեզերակառույցի հիմնական միավորներից մեկը:

Ծիրակացու թվաբանության դասագիրքը, մասնավորապես՝ թվաբանական գործողությունների աղյուսակները, հնագույնն են համաշխարհային մաքենատիեկական գրականության մեջ: Մինչև հայ գիտնականի դասագրքի հայտնաբերելը գիտության պատմության մեջ ընդունված էր այն տեսակետը, թե հնագույն թվաբանական աղյուսակների հեղինակը XIV դարի բյուզանդական մաքենատիեկոս հայազգի Նիկողայոս Արտավագդի է: Սակայն պրոֆեսոր Գ.Բ. Պետրոսյանի կողմից կատարած համեմատական ուսումնասիրությունը հանգեցրեց այն եզրակացության, որ Նիկողայոս Արտավագդի աղյուսակները լիովին համընկնում են Ծիրակացու աղյուսակների հետ: Պարզապես հայկական տառերի փոխարեն նա օգտագործել է հունական տառեր¹: «Մաքենատիեկական մշակույթի հնության առումով, —գրում է Ղեպմանը, — Սովորական Սիրության ժողովուրդների մեջ առաջին տեղում են հայերը: Յայերի մոտ VII դարում եղել է հրաշալի գիտնական Անանիա Ծիրակացին... Իր աշխատություններում, բացի զուտ մաքենատիեկական խնդիրներից, արծարծում է նաև այլ հարցեր՝ երկի գնդաձևության, Լուսնի և Արեգակի խավարումների, բազմանկյուն քվերի, օրացուցային հաշվումների, արեգակնային ժամացույցների մասին, և այդ ամենը նա արտահայտել է մի դարաշջոջանում, եթե եվլոպական ժողովուրդների մոտ գրեթե ոչ ոք այդ հարցերի ուսումնասիրությանը չէր գրավվել»²: Թվաբանության պատմության հայտնի մասնագետը միանշանակ պնդում է, որ Անանիա Ծիրակացու թվաբանական չորս գործությունների աղյուսակները հնագույն են համաշխարհային մաքենատիեկական գրականության պատմության մեջ:

Նմանօրինակ բարձր գնահատական են տալիս նաև մաքենատիեկայի պատմությանը նվիրված հիմնարար Կոլեկտիվ աշխատության հեղինակները. «Ընդհանուր առնամբ Ծիրակացու թվաբանական աշխատությունը մեզ հայտնի թվաբանական դասագրքերից հնագույնն է և բովանդակում է թվաբանական գործողություններ կատարելու համար

¹ Տես Պետրոսյան Գ.Բ., Մաքենատիեկան Յայաստանում հիմ և միջին դարերում, Եր., 1959, էջ 176:

² Հեղուան Ա.Ա. Իстория арифметики. М., 1959. С. 18.

մեզ իստացնական այլուսակներից ամենահինը: Այն վկայում է Դայաստանում թվաբանական բարձր գրագիտության մասին»¹

Թվաբանության դասագրքի պահպանված տարբերակը ընդգրկում է թվաբանական չորս գործողությունների այլուսակներ, կոտորակավոր թվերի վրա կազմված խնդիրներ, խրախճանականներ և գույգ ու կենտ թվերի ցուցակ և այլն: Դասագրքի հատվածները վերաբերում են գերազանցապես լոգիստիկային՝ գործնական թվաբանության բնագավառին: Բայց նկատի ունենալով Շիրակացու գիտառուսումնական աշխատությունների կառուցվածքային սկզբունքը՝ ընդհանուրից դեպի մասնավորը, այլ կերպ ասած՝ տեսական հիմնադրույթներից և հիմնավորումներից գործնական հարցերի քննարկումը, ինչպես նաև հատվածների բնույթը, կարելի է միանգամայն հաճածայնել ակադեմիկոս Յ. Օրբելու կարծիքին, որ դասագիրքն ամենայն հավանականության ունեցել է նաև «տեսական մաս»²:

Դայ բնագիտական մտքի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ուներ նաև Շիրակացու բառակազմական և տերմինաշխնական գործունեությունը, մասնավորապես՝ աստղագիտական հայերեն տերմինների մեկնաբանության և ճշգրտման ուղղությամբ:

Անանիա Շիրակացու մաքենատիկական գիտելիքներն արտահայտվեցին նաև երաժշտական ակուստիկայի բնագավառում: Դետևելով Դավիթ Անհաղի Մեսական հիմնադրույթներին (թվերի հարաբերությունները միաժամանակ ծայների հարաբերություններ են) և ընդօրինակելով այդ նպատակով նորապայութափորական մաթեմատիկոս Նիկոմաքոսի (Արք.) այլուսակը՝ նա ստեղծեց «տասնորդական այլուսակի» հայկական տարբերակը: Դրանով նա էապես հարստացրեց «հայ երաժշտագիտությունը՝ ծայների, ծայնամիջոցների և ծայնաշարերի կազմությանը վերաբերող նոր գաղափարներով»³: Շիրակացու երկերում այդ այլուսակը կազմված է թվագրության հին հայկական համակարգի համաձայն: Լավագույն արտահայտելով մոնողիկ երաժշտության ծայնային հիմքի ակուստիկական հարաբերությունը համապատասխան կազմակերպության մասին:

¹ История отечественной математики. Т. 1. Киев, 1966. С. 445.

² Вопросы и решения варданата Анакия Ширакаци, армянского математика VII века / Пер. И.А. Орбели. СПб., 1918. С. 10.

³ Նույն տեղում, էջ 172

յունները՝ այն Հայաստանում գոյատևեց ողջ միջնադարի ընթացքում¹: Մեծ գիտնականը հորինել է նաև մի շարք շարականներ:

Շիրակացու կյանքն ու գործը, նրա՝ որպես «մեծ բնախուզի» հեղինակությունն արտահայտվել են նաև ժողովրդական գիտակցության մեջ մի շարք ավանդությունների ձևով: Մասնավորապես նրան է վերագրվում Երկարից ոսկի ստանալու գաղտնիքի գյուտը, համասփյուռ բույսի հայտնաբերումը, որը միջնադարյան Հայաստանում համարվում էր իմաստության, գիտության և հնարամտության խորհրդանշիչն ու պահապանը²:

Շիրակացու Երկերի շնորհիվ ավարտվեց բնագիտական ուղղության ձևավորումը հայ տեսական մտքի պատմության մեջ, որոնք միաժամանակ փաստագրական և տեսական հիմք ծառայեցին XI-XV դարերի հայ բնագիտական մտքի համար: Խոկ կրության նրա նոր ծրագիր, ուսուցման մեթոդիկան ու դիդակտիկան ուրվագծեցին միջնադարյան Հայաստանի բարձրագույն, մասնավորապես՝ բնագիտական-մաթեմատիկական կրության հետագա զարգացման ուղիները: Հայ գիտնականի գրավոր ժառանգությունը որոշակի ազդեցություն է ունեցել ոչ միայն հայ, այլև բյուզանդական մի շարք գիտնականների ուսմունքների վրա:

Անդրադառնալով Անանիա Շիրակացու կատարած գիտապատմական դերին, անվանի պատմաբան պրոֆեսոր Ն. Աղոնցը գրում է. «Ստուգ գիտության այն ջահը, որ տեսնում ենք Անանիա Շիրակացու ծեղորին VII դարում և որը Բագրատի միջոցով թերևս անցավ Լևոն փիլիսոփային և փայլեց Մագնավյա պալատում, տակավին (հանձինս Նիկողայոս Արտավագդի) արկայծում էր մի համեստ հայ շրջանում Բյուզանդիայի նայրաքաղաքի մեջ»³:

¹Տաշմուշյան Ի.Կ. Տեօրիա մշակում և ձևավորում Հայության պատմության մեջ. Եր., 1977. Ծ. 109, 121.

²Ալիշան Դ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 191, Մեացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 486 – 487:

³Աղոնց Ն., Պատմական ուսումնամակրություններ, Փարիս, 1948, էջ 337: